# ՀԱՎԵԼՎԱԾ I
# ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բացատրական ծանոթագրություն

1. Սույն հավելվածում Կողմին առնչվող առդիրով սահմանվում են, 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.7-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.10-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) համաձայն, այդ Կողմի առկա միջոցները, որոնց վրա չեն տարածվում հետևյալով սահմանված պարտավորություններից մի քանիսը կամ բոլորը՝
   ա) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.3-րդ հոդված (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.6-րդ հոդված (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ).
   բ) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.4-րդ հոդված (Ազգային ռեժիմ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.5-րդ հոդված (Ազգային ռեժիմ).
   գ) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.5-րդ հոդված (Շուկայի մատչելիություն).
   դ) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.6-րդ հոդված (Տեղական մակարդակում ներկայություն).
   ե) 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.8-րդ հոդված (Գործողություններին ներկայացվող պահանջներ). կամ
   զ) 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.9-րդ հոդված (Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ):
2. Առդիրում կատարված յուրաքանչյուր գրառում ներկայացվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝
   ա) **«Ոլորտ»** բաղադրիչը վերաբերում է այն ընդհանուր ոլորտին, որի վերաբերյալ կատարվել է գրառումը.
   բ) **«Ենթաոլորտ»** բաղադրիչը, հղման առկայության դեպքում, վերաբերում է այն կոնկրետ ենթաոլորտին, որի վերաբերյալ կատարվել է գրառումը.
   գ) **«Տնտեսական գործունեության տեսակների դասակարգում» բաղադրիչը**, հղման առկայության դեպքում, վերաբերում է չհամապատասխանող միջոցներում ընդգրկված գործողությանը՝
      i) Սինգապուրի դեպքում՝ ըստ Հիմնական ապրանքների ժամանակավոր դասակարգման մեջ օգտագործված ՀԱԴ ժամանակավոր ծածկագրերի (Վիճակագրական փաստաթղթեր, շարք M, թիվ 77, Միջազգային տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ, Միավորված ազգերի կազմակերպության

վիճակագրության բյուրո, Նյու Յորք, 1991 թվական), և

ii) Հայաստանի դեպքում՝ ըստ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013»-ում օգտագործվող ծածկագրերի, ինչը նշանակում է՝ Հայաստանի տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ, որը սահմանվել է Հայաստանի էկոնոմիկայի նախարարության կողմից՝ 2013 թվականի սեպտեմբերի 19-ին:

դ) **«Համապատասխան պարտավորություններ»** բաղադրիչում սահմանվում են 1-ին կետում նշված այն պարտավորությունը (պարտավորությունները), որը(որոնք), 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.7-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.10-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) համաձայն, չեն տարածվում նշված միջոցի (միջոցների) վրա, ինչպես նշված է այդ գրառման **«Նկարագրություն»** բաղադրիչում.

ե) **«Նկարագրություն»** բաղադրիչում ներկայացվում են միջոցի այն չհամապատասխանող հայեցակետերը, որոնց վերաբերում է գրառումը. և

զ) **«Միջոցի աղբյուր»** բաղադրիչում նշվում են օրենքները, կանոնակարգերը, կանոնները, ընթացակարգերը, որոշումները, վարչական ակտերը կամ ցանկացած այլ ձև, որի առնչությամբ կատարվում է գրառումը: **«Միջոցի աղբյուր»** բաղադրիչում ներկայացված միջոցը՝

i) նշանակում է միջոց՝ փոփոխություններով, գործող կամ երկարաձգված՝ սույն Համաձայնագրին ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ. և

ii) ներառում է որևէ երկրորդական միջոց, որն ընդունվել կամ իրականացվել է տվյալ միջոցի հիման վրա և դրան համապատասխան.

3. Կատարված գրառումը մեկնաբանելիս պետք է հաշվի առնվեն կատարված գրառման բոլոր բաղադրիչները:

# ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԴԻՐ

1.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Հնարավոր է, որ որոշ դեպքերում ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունը չկարողանա ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից սինգապուրյան դոլարով 5 միլիոն սինգապուրյան դոլարից ավելի վարկ վերցնել՝ պայմանավորված ֆինանսական կազմակերպությունների կողմից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին սինգապուրյան դոլարով վարկի տրամադրման նկատմամբ սահմանված հետևյալ սահմանափակումներով:<br>Ֆինանսական կազմակերպությունը որևէ ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության չի տրամադրում յուրաքանչյուր ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության հաշվարկով 5 միլիոն սինգապուրյան դոլարը (S$) գերազանցող վարկային գծեր՝ արտահայտված սինգապուրյան դոլարով.<br>ա) եթե սինգապուրյան դոլարով արտահայտված ֆինանսական միջոցներն օգտագործվելու են Սինգապուրի տարածքից դուրս՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝<br>i. այդ ֆինանսական միջոցները վարկը տրամադրելու պահին կամ մինչև արտերկիր փոխանցելը փոխարկվում են արտարժույթով. կամ<br>ii. այդ ֆինանսական միջոցները նախատեսված են վճարահաշվարկային համակարգի խափանումները կանխելու համար, երբ ֆինանսական |

| | |
|---|---|
| | կազմակերպությունը սինգապուրյան դոլարով տրամադրում է օվերդրաֆտ՝ փոխանցելով ցանկացած ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության ցանկացած թղթակցային հաշվին, իսկ ֆինանսական կազմակերպությունը ձեռնարկում է ողջամիտ միջոցներ՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում օվերդրաֆտի մարումն ապահովելու համար. և<br>բ) եթե հիմքեր կան ենթադրելու, որ սինգապուրյան դոլարով արտահայտված ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել սինգապուրյան դոլարի արժութային շահարկումների համար՝ անկախ այն հանգամանքից, թե սինգապուրյան դոլարով արտահայտված ֆինանսական միջոցներն օգտագործվելու են Սինգապուրում կամ դրա սահմաններից դուրս:<br>Ֆինանսական կազմակերպությունը չի իրականացնում սինգապուրյան դոլարով բաժնետոմսերի կամ պարտատոմսերի թողարկում ցանկացած ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության համար այն դեպքում, երբ սինգապուրյան դոլարով արտահայտված ֆինանսական միջոցներն օգտագործվում են Սինգապուրի տարածքից դուրս, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական միջոցները տրամադրելու պահին կամ մինչև արտերկիր փոխանցելը փոխարկվում են արտարժույթով:<br>«Ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություն» նշանակում է ցանկացած ֆինանսական կազմակերպություն, որը համապատասխան պարզաբանման մեջ սահմանված կարգով չի համարվում ռեզիդենտ: |
| **Միջոցի աղբյուր** | *«Բանկային գործունեության մասին» ակտ*, 19-րդ գլուխ, ՍԱՎ-ի պարզաբանում 757<br>*«Սինգապուրի արժույթի վարչության մասին» ակտ*, 186-րդ գլուխ, ՍԱՎ-ի պարզաբանում 1105<br>*«Ֆինանսական ընկերությունների մասին»* ակտ, |

| | |
|---|---|
| | 108-րդ գլուխ, ՍԱՎ-ի պարզաբանում 816<br>*«Ապահովագրության մասին»* ակտ, 142-րդ գլուխ, ՍԱՎ-ի պարզաբանում 109<br>*«Արժեթղթերի և ֆյուչերսների մասին»* ակտ, 289-րդ գլուխ, ՍԱՎ-ի պարզաբանում՝ ԱՖԱ 04-N04 |

**2.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ՝<br>«ՓԻԷՍԷՅ Կորպորեյշնի» [PSA Corporation] կամ դրա իրավահաջորդ կազմակերպության ընդհանուր օտարերկրյա բաժնեմասերի սահմանաչափը կազմում է 49%:<br>«Ընդհանուր օտարերկրյա բաժնեմաս» եզրույթը սահմանվում է որպես բաժնեմասերի ընդհանուր թիվը, որը պատկանում է՝<br>ա) ցանկացած անձի, ով Սինգապուրի քաղաքացի չէ.<br>բ) ցանկացած կորպորացիայի, որի ոչ ավելի, քան 50%-ը պատկանում է Սինգապուրի քաղաքացիներին կամ Սինգապուրի կառավարությանը. և (կամ)<br>գ) ցանկացած այլ ձեռնարկության, որը չի պատկանում կամ որի վերահսկումը չի իրականացվում Սինգապուրի կառավարության կողմից: |
| **Միջոցի աղբյուր** | Սա Սինգապուրի կառավարության վարչական քաղաքականությունն է և ամրագրված է «ՓԻԷՍԷՅ Կորպորեյշնի» [PSA Corporation] հիմնադիր փաստաթղթերում և կանոնադրության մեջ: |

**3.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Բացի Սինգապուրի կառավարությունից՝ բոլոր անհատ ներդրողների համար ձեռնարկություններում և (կամ) դրանց իրավահաջորդ կազմակերպություններում գործելու են բաժնետոմսերի տնօրինման ստորև ներկայացված սահմանաչափերը՝<br>ա) «Սինգափուր Թեքնոլոջիս Էնջինիերինգ»՝ 15%.<br>բ) «ՓԻԷՍԷՅ Կորպորեյշն»՝ 5%.<br>գ) «Սինգապուրի ավիաուղիներ»՝ 5%.<br>դ) «ՓաուերԳազ», «ԷՍՓԻ ՓաուերԳրիդ», «ԷՍՓԻ ՓուերԱսսեթս», «Սինգափուր ԷԼԷՆՋԻ Կորպորեյշն»՝ 10 %<br>Այս վերապահման նպատակով այս ձեռնարկություններում և (կամ) դրանց իրավահաջորդ կազմակերպություններում ներդրողի կողմից բաժնետոմսի տնօրինումը ենթադրում է բաժնետոմսի թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի տնօրինում: |
| **Միջոցի աղբյուր** | Սա Սինգապուրի կառավարության վարչական քաղաքականությունն է և ամրագրված է վերը նշված համապատասխան ձեռնարկությունների հիմնադիր փաստաթղթերում և կանոնադրությունների մեջ:<br>*«Գազի մասին» ակտ*, 116Ա գլուխ, 2002 թվականի խմբագրություն, 63(Բ) բաժին<br>*«Էլեկտրաէներգիայի մասին» ակտ*, 89Ա գլուխ, 2002 թվականի խմբագրություն, 30(Բ) բաժին |

**4.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>«Ֆիրմային անվանումների գրանցման մասին» 2014 թվականի ակտ<br>Եթե այն անձը, որի համար գործում է «Ֆիրմային անվանումների գրանցման մասին» ակտի համաձայն գրանցվելու պահանջ, կամ ցանկացած կորպորացիայի դեպքում՝ տնօրենները կամ կորպորացիայի քարտուղարները չեն բնակվում Սինգապուրում, ապա պետք է նշանակվի լիազորված ներկայացուցիչ, որը պետք է, որպես կանոն, լինի Սինգապուրի ռեզիդենտ: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ֆիրմային անվանումների գրանցման մասին» 2014 թվականի ակտ*<br>*«Ֆիրմային անվանումների գրանցման մասին» 2015 թվականի կանոնակարգեր* |

5.

| Ոլորտ | Բիզնես ծառայություններ |
| --- | --- |
| Ենթաոլորտ | Ճարտարապետական ծառայություններ<br>Ճարտարապետական ծառայությունները ներառում են շահույթ ստանալու նպատակով կամ վարձատրության դիմաց ցանկացած ճարտարապետական պլանի, գծագրի, դրա կրկնօրինակի, նախագծի, նախագծային առաջադրանքի և նմանատիպ փաստաթղթերի նախապատրաստում և վաճառք կամ տրամադրում՝ ցանկացած շենքի կամ դրա մի մասի կառուցման, ընդլայնման կամ փոփոխման գործընթացում օգտագործելու համար: Սա ներառում է շենքերի սերտիֆիկացում և զննություն՝ շինարարական վարչության կամ պետական վարչության պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով: |
| Տնտեսական գործունեության տեսակ | - |
| Համապատասխան պարտավորություններ | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| Նկարագրություն | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Ճարտարապետական ծառայությունների մատուցում թույլատրվում է միայն այն ընկերություններին, որոնք գրանցված են Ճարտարապետների խորհրդում (ՃԽ) և (կամ) դրա իրավահաջորդ մարմնում և համարվում են Սինգապուրի ռեզիդենտ:<br>Բոլոր կորպորացիաներին, սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերություններին և գործընկերություններին (այդ թվում՝ այն գործընկերություններին, որոնք ճարտարապետական ծառայությունները տրամադրում են՝ որպես բազմադիսցիպլինար կորպորացիայի կամ գործունեության մաս), որոնք տրամադրում են ճարտարապետական |

| | |
|---|---|
| | ծառայություններ, լիցենզիա տրամադրում է Ճարտարապետների խորհուրդը (ՃԽ) և (կամ) դրա իրավահաջորդ մարմինը: Լիցենզիա ստանալու համար սահմանված պահանջներին համապատասխանելու համար կորպորացիան կամ գործընկերությունը պետք է՝<br>ա) գտնվի այն տնօրենի կամ գործընկերոջ հսկողության և ղեկավարության ներքո, որը Սինգապուրում գրանցված ճարտարապետ է. բազմադիսցիպլինար կորպորացիայի կամ գործընկերության դեպքում ճարտարապետական ծառայությունների հետ կապված կորպորացիայի կամ գործընկերության գործունեությունը պետք է լինի այն տնօրենի կամ գործընկերոջ հսկողության և ղեկավարության ներքո, որը Սինգապուրում գրանցված ճարտարապետ է. և<br>բ) սահմանափակ պատասխանատվությամբ կորպորացիաների դեպքում կորպորացիայի տնօրենների մեծ մասը պետք է լինի Սինգապուրում գրանցված ճարտարապետ կամ կից ոլորտների մասնագետ՝ անսահմանափակ պատասխանատվությամբ կորպորացիաների դեպքում տնօրենների մեծ մասը պետք է լինի գրանցված պրոֆեսիոնալ ճարտարապետ կամ կից ոլորտների մասնագետ, որն ունի մասնագիտական գործունեության գործող հավաստագրեր. գործընկերությունների դեպքում գործընկերության հիմնական կապիտալից և շահույթից ստացվող շահավետ տոկոսները տնօրինվում են Սինգապուրում գրանցված ճարտարապետների կամ կից ոլորտների մասնագետների կողմից, որոնք ունեն մասնագիտական գործունեության գործող հավաստագրեր:<br>Կից ոլորտների մասնագետները Սինգապուրում գրանցված հողաչափողներ և ճարտարագետներ են: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ճարտարապետների մասին» ակտ*, 12-րդ գլուխ, |

| | |
|---|---|
| | 2000 թվականի խմբագրություն |

**6.**

| | |
|---|---|
| Ոլորտ | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Հանրային հաշվապահական հաշվառման ծառայություններ (այդ թվում՝ պարտադիր աուդիտ) |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 86211 Ֆինանսական աուդիտի ծառայություններ<br>ՀԱԴ 86309 Հարկերի հետ կապված այլ ծառայություններ |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br>Հանրային հաշվապահական հաշվառման ծառայություններ կարող են մատուցել միայն հանրային հաշվապահները, հաշվապահական ընկերությունները, հաշվապահական կորպորացիաները կամ հաշվապահական ՍՊԸ-ները: Հանրային հաշվապահները պետք է գրանցված լինեն Հաշվապահական հաշվառման և կորպորատիվ հարցերով կարգավորող մարմնում (ՀԿԿՄ) և համապատասխանեն «Հաշվապահների մասին» ակտով սահմանված գրանցման պահանջներին, այդ թվում՝ որակավորումներին, փորձին, ինչպես նաև Սինգապուրի երդվյալ հաշվապահների ինստիտուտին (ՍԵՀԻ) անդամակցությանը ներկայացվող պահանջներին: Հաշվապահական ընկերությունները, հաշվապահական կորպորացիաները և հաշվապահական ՍՊԸ-ները պետք է հաստատվեն Հանրային հաշվապահների վերահսկողության կոմիտեի կողմից, որը, համաձայն «Հաշվապահների մասին» ակտի, համարվում է ՀԿԿՄ խորհրդի կոմիտե: Հաշվապահական ընկերությունների, հաշվապահական կորպորացիաների կամ հաշվապահական ՍՊԸ-ների գործունեությունը, այնքանով, որքանով այն առնչվում է Սինգապուրում հանրային հաշվապահական հաշվառման ծառայությունների տրամադրմանը/մատուցմանը, գտնվում է մեկ կամ |

| | |
|---|---|
| | ավելի տնօրենների (հաշվապահական կորպորացիայի դեպքում) կամ գործընկերոջ (հաշվապահական ընկերության դեպքում) հսկողության և ղեկավարության ներքո, որը (որոնք), որպես կանոն, Սինգապուրի ռեզիդենտ համարվող հանրային հաշվապահ (հաշվապահներ) է (են)[8]: |
| **Միջոցի աղբյուր** | *«Հաշվապահների մասին» ակտ*, 2-րդ գլուխ, 2, 10(1), 17(3)(դ), 18(3)(գ) և 18Ա(3)(ե) բաժիններ<br>*Հաշվապահների (Հանրային հաշվապահների) կանոնագիրք*, 2-րդ գլուխ, Ռ1. Երկրորդ հավելված, 7-րդ պարբերություն<br>*«Ընկերությունների մասին» ակտ*, 50-րդ գլուխ, 9-րդ բաժին |

[8] Հղում՝ տե՛ս «Հաշվապահների մասին» ակտի 17-րդ, 18-րդ և 18Ա բաժինները:

7.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ. Մասնագիտական ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Հողաչափման ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Բոլոր այն անձինք, որոնք ցանկանում են Սինգապուրում տրամադրել հողաչափման ծառայություններ, պետք է գրանցվեն Հողաչափողների խորհրդում (ՀՁԽ) և (կամ) դրա իրավահաջորդ մարմնում, և պետք է ֆիզիկապես ներկա գտնվեն Սինգապուրում հողաչափման ծրագրի իրականացման ընթացքում, քանի որ անհրաժեշտ է նրանց վերահսկողությունը և (կամ) սերտիֆիկացումը:<br>Բոլոր այն կորպորացիաները, սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերությունները և գործընկերությունները (այդ թվում՝ այն գործընկերությունները, որոնք տրամադրում են հողաչափման ծառայություններ՝ որպես բազմադիսցիպլինար կորպորացիայի կամ գործունեության մաս), որոնք ցանկանում են տրամադրել հողաչափման ծառայություններ, պետք է Խորհրդից ստանան լիցենզիա: Լիցենզիա ստանալու համար սահմանված պահանջներին համապատասխանելու համար կորպորացիան կամ գործընկերությունը պետք է՝<br>ա) գտնվի այն տնօրենի կամ գործընկերոջ հսկողության և ղեկավարության ներքո, որը Սինգապուրում գրանցված հողաչափող է. բազմադիսցիպլինար կորպորացիայի կամ գործընկերության դեպքում հողաչափման ծառայությունների հետ կապված կորպորացիայի կամ գործընկերության |

| | |
|---|---|
| | գործունեությունը պետք է լինի այն տնօրենի կամ գործընկերոջ հսկողության և ղեկավարության ներքո, որը Սինգապուրում գրանցված հողաչափող է. և<br>բ) սահմանափակ պատասխանատվությամբ կորպորացիաների դեպքում դրա տնօրենների մեծ մասը պետք է լինի Սինգապուրում գրանցված հողաչափող կամ կից ոլորտների մասնագետ՝ անսահմանափակ պատասխանատվությամբ կորպորացիների դեպքում տնօրենների մեծ մասը պետք է լինի գրանցված հողաչափող կամ կից ոլորտների մասնագետ, որն ունի մասնագիտական գործունեության գործող հավաստագրեր. գործընկերությունների դեպքում միայն Սինգապուրում գրանցված հողաչափողները և կից ոլորտների մասնագետները կարող են ընկերության հիմնական կապիտալից և շահույթից ստանալ շահավետ տոկոսներ:<br>Կից ոլորտների մասնագետները Սինգապուրում գրանցված ճարտարագետներ և ճարտարապետներ են: |
| **Միջոցի աղբյուր** | *«Հողաչափողների մասին» ակտ*, 156-րդ գլուխ, 2012 թվականի խմբագրություն, 12-23-րդ բաժիններ<br>*«Հողաչափողների կանոնագիրք»*, 2-20-րդ կանոն |

**8.**

| Ոլորտ | Բիզնես ծառայություններ |
| --- | --- |
| **Ենթաոլորտ** | Առանց օպերատորի լիզինգի կամ վարձակալության ծառայություններ՝ կապված անձնական ավտոմոբիլների, բեռնափոխադրող տրանսպորտային միջոցների և այլ ցամաքային տրանսպորտային միջոցների հետ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 83101, 83102, 83105 Առանց օպերատորի լիզինգի կամ վարձակալության ծառայություններ՝ կապված անձնական ավտոմոբիլների, բեռնափոխադրող տրանսպորտային միջոցների և այլ ցամաքային տրանսպորտային միջոցների հետ |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br>Արգելվում է Սինգապուրի ռեզիդենտների կողմից անձնական ավտոմոբիլների, բեռնափոխադրող տրանսպորտային միջոցների և այլ ցամաքային տրանսպորտային միջոցների՝ առանց օպերատորի միջսահմանային վարձակալությունը՝ դրանք Սինգապուրում օգտագործելու նպատակով: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ճանապարհային երթևեկության մասին» ակտ*, 276-րդ գլուխ, 2004 թվականի խմբագրություն |

9.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Արտոնագրային հավատարմատարի ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրում որպես արտոնագրային հավատարմատար գործունեություն իրականացնելու, գործելու կամ հանդես գալու թույլտվություն տրամադրվում է միայն այն ծառայություն մատուցողներին, որոնք գրանցված են Սինգապուրի մտավոր սեփականության բյուրոյում (ՍՄՍԲ) և (կամ) դրա իրավահաջորդ մարմնում և համարվում են Սինգապուրի ռեզիդենտ:<br>Սինգապուրում որպես արտոնագրային հավատարմատար գործունեություն իրականացնելու, գործելու կամ հանդես գալու թույլտվություն տրամադրվում է միայն այն ծառայություն մատուցողներին, որոնք որպես տնօրեն կամ գործընկեր ունեն Սինգապուրում գրանցված, Սինգապուրի ռեզիդենտ հանդիսացող առնվազն մեկ արտոնագրային հավատարմատար: |
| **Միջոցի աղբյուր** | *«Արտոնագրերի մասին» ակտ*, 221-րդ գլուխ, 2005 թվականի խմբագրություն |

**10.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Աշխատանքի տեղավորման և անձնակազմին ծառայությունների մատուցման հետ կապված ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր. Միայն տեղական մակարդակում ներկայությամբ ծառայություններ մատուցողներին է թույլատրվում ստեղծել աշխատանքի տեղավորման գործակալություններ և օտարերկրացի աշխատողներին Սինգապուրում տեղավորել աշխատանքի: |
| **Միջոցի աղբյուր** | *«Աշխատանքի տեղավորման գործակալությունների մասին»* ակտ, 92-րդ գլուխ |

11.

| Ոլորտ | Բիզնես ծառայություններ |
|---|---|
| Ենթաոլորտ | Պրոֆեսիոնալ ճարտարագիտական ծառայություններ<br>Պրոֆեսիոնալ ճարտարագիտական ծառայությունները ներառում են ցանկացած պրոֆեսիոնալ ծառայություն, խորհրդատվություն, ուսումնասիրություն, գնահատում, պլանավորում, նախագծում կամ ցանկացած պետական կամ մասնավոր սեփականություն համարվող հանրային շինությունների, շենքերի, մեքենաների, սարքավորումների, գործընթացների, աշխատանքների կամ ծրագրերի ստեղծման կամ գործարկման նկատմամբ բարեխիղճ վերահսկողություն, որոնց դեպքում նախատեսվում է հանրային շահի և բարեկեցության, կյանքի, հանրային առողջության կամ գույքի պահպանման երաշխավորում, ինչպես նաև անհրաժեշտ է ճարտարագիտական սկզբունքների ու տվյալների կիրառություն: |
| Տնտեսական գործունեության տեսակ | - |
| Համապատասխան պարտավորություններ | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| Նկարագրություն | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրում ճարտարագիտության սահմանված ոլորտներում, մասնավորապես՝ քաղաքացիական շինարարության, էլեկտրական, մեխանիկական և քիմիական ճարտարագիտության ոլորտներում պրոֆեսիոնալ ճարտարագիտական ծառայությունների մատուցման թույլտվություն տրամադրվում է միայն այն անձանց, որոնք գրանցված են Պրոֆեսիոնալ ճարտարագետների խորհրդում (ՊՃԽ), կամ այն ընկերություններին, որոնք Պրոֆեսիոնալ ճարտարագետների |

| | |
|---|---|
| | խորհրդից ստացել են լիցենզիա: Սինգապուրում պրոֆեսիոնալ ճարտարագիտական աշխատանքները, որոնց համար անհրաժեշտ է մարմինների կողմից տրված հաստատումը, իրականացվում է այն պրոֆեսիոնալ ճարտարագետի կողմից, որը ծրագրի իրականացման ընթացքում ֆիզիկապես գտնվում է Սինգապուրում: Բոլոր կորպորացիաները, բազմադիսցիպլինար գործընկերությունները և սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերությունները, որոնք տրամադրում են պրոֆեսիոնալ ճարտարագիտական ծառայություններ, պետք է Պրոֆեսիոնալ ճարտարագիտական խորհրդից և (կամ) դրա իրավահաջորդ մարմնից ստանան լիցենզիա: Լիցենզիա ստանալու համար սահմանված պահանջներին համապատասխանելու համար կորպորացիան կամ բազնադիսցիպլինար գործընկերությունն ու սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերությունը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին. <br>ա) կորպորացիայի, բազմադիսցիպլինար գործընկերության կամ սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերության՝ պրոֆեսիոնալ ճարտարագիտական ծառայությունների հետ կապված գործունեությունը պետք է լինի այն տնօրենի կամ գործընկերոջ հսկողության և ղեկավարության ներքո, որը Սինգապուրում գրանցված պրոֆեսիոնալ ճարտարագետ է, ունի մասնագիտական գործունեության գործող հավաստագիր, և որը, կորպորացիաների կամ սահմանափակ պատասխանատվության գործընկերությունների դեպքում, կորպորացիայի տնօրենների խորհրդի կամ սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերությունների գործընկերների որոշմամբ լիազորված է կորպորացիայի կամ սահմանափակ պատասխանատվությամբ |

| | |
|---|---|
| | գործընկերության անունից ճարտարագիտական հարցերով բոլոր վերջնական որոշումները կայացնելու համար, և<br>բ) սահմանափակ կամ անսահմանափակ պատասխանատվությամբ կորպորացիաների դեպքում տնօրենների ոչ պակաս, քան 51%-ը պետք է լինի Սինգապուրում գրանցված պրոֆեսիոնալ ճարտարագետ կամ կից ոլորտների մասնագետ. բազմադիսցիպլինար գործընկերությունների դեպքում գործընկերությունների հիմնական կապիտալից և շահույթից ստացված շահավետ տոկոսը տնօրինվում է Սինգապուրում գրանցված պրոֆեսիոնալ ճարտարագետների կամ կից ոլորտների մասնագետների կողմից. սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերությունների դեպքում գործընկերները պետք է լինեն Սինգապուրում գրանցված պրոֆեսիոնալ ճարտարագետներ կամ կից ոլորտների մասնագետներ, լիցենզավորված կորպորացիաներ կամ լիցենզավորված սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերություններ:<br>Կից ոլորտների մասնագետները Սինգապուրում գրանցված ճարտարագետներ և ճարտարապետներ են: |
| **Միջոցի աղբյուր** | *«Պրոֆեսիոնալ ճարտարագետների մասին» ակտ,* 253-րդ գլուխ, 10-րդ, 11-րդ, 20-26-րդ բաժիններ |

12.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Անշարժ գույքի հետ կապված ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 82202 Ոչ բնակելի գույքի կառավարման ծառայություններ՝ վարձատրության դիմաց կամ պայմանագրային հիմունքներով |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Միայն Սենտոսայի զարգացման կորպորացիային և (կամ) դրա իրավահաջորդ մարմնին է թույլատրվում զարգացնել և կառավարել Սենտոսա կուրորտային կղզին և դրա ջրային ուղիները:<br>Միայն Սինգապուրի հողօգտագործման վարչությանը, Ազգային պարկերի հարցերով խորհրդին և (կամ) դրանց իրավահաջորդ մարմիններին է թույլատրվում զարգացնել և կառավարել Սինգապուրի հարավային կղզիները:<br>Այս վերապահման նպատակով «Սինգապուրի հարավային կղզիներ» են համարվում Սուրբ Ջոնի կղզիները, Ղազար կղզին, Կուսու կղզին, Ռենգգիտ կղզին, Քույր կղզին, Ուրվականների կղզին, Բիոլա կղզին, Չոն կղզին և Տեկուկոր կղզին: |
| **Միջոցի աղբյուր** | *«Սենտոսայի զարգացման կորպորացիայի մասին» ակտ,* 291-րդ գլուխ, 1998 թվականի խմբագրություն (1998 թվականի մայիսի 30)<br>*«Սինգապուրի հողօգտագործման վարչության մասին» ակտ,* 6(1)(ե)(ii) բաժին |

13.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Տեխնիկական փորձարկման և վերլուծության ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակն** | ՀԱԴ 86769 Տեխնիկական փորձարկման և վերլուծության այլ ծառայություններ |
| **Համապատասխան պարտավորություններ** | Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր.</u><br>Միայն տեղական մակարդակում ներկայությամբ ծառայություն մատուցողներին է թույլատրվում տրամադրել այն կենդանիների, բույսերի և կենդանական ու բուսական ծագման արտադրանքի փորձարկման, վերլուծական և սերտիֆիկացման ծառայություններ, որոնք ֆիզիկապես գտնվում են Սինգապուրում, ներառյալ, սակայն չսահմանափակվելով այն դեպքերով, երբ այդ արտադրատեսակները նախատեսված են ներմուծման, արտահանման և վերաարտահանման նպատակով ներմուծման համար:<br>Սինգապուրն իրավունք է վերապահում և ազատ է փոփոխելու արտադրատեսակները և (կամ) ավելացնելու դրանց թիվը, որը սահմանված և (կամ) *թվարկված է «Կենդանիների և թռչունների մասին»* ակտում և *«Բույսերի նկատմամբ հսկողության մասին» ակտում*: |
| **Միջոցի աղբյուր** | *Ազգային Պարկերի Խորհրդի Ակտ*, 198Ա գլուխ, 2012 թվականի խմբագրություն<br>*«Կենդանիների և թռչունների մասին» ակտ*, 7-րդ գլուխ, 2002 թվականի խմբագրություն<br>*«Բույսերի նկատմամբ հսկողության մասին» ակտ*, 57Ա գլուխ, 2000 թվականի խմբագրություն |

**14.**

| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ |
|---|---|
| **Ենթաոլորտ** | Հետաքննության մասնավոր ծառայություններ<br>Չզինված թիկնապահական ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 87301 Հետաքննության ծառայություններ<br>ՀԱԴ 87302 Անվտանգության ապահովման հարցերով խորհրդատվական ծառայություններ<br>ՀԱԴ 87305 Թիկնապահական ծառայություններ (միայն վերաբերում է անվտանգության ապահովման նպատակով չզինված թիկնապահական ծառայությանը) |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br><u>Անվտանգության գործակալությունների համար</u><br>Օտարերկրացիներին թույլատրվում է հիմնել անվտանգության գործակալություններ՝ չզինված թիկնապահներ վարձելու ծառայություններ տրամադրելու համար, սակայն նրանք պետք է ընկերություն գրանցեն տեղական մասնակցությամբ: Տնօրեններից առնվազն երկուսը պետք է լինեն Սինգապուրի քաղաքացի կամ Սինգապուրում մշտական կացության կարգավիճակ ունեցող անձ:<br><u>Հետաքննության մասնավոր գործակալությունների համար</u><br>Օտարերկրացիներին չի թույլատրվում հիմնել հետաքննության մասնավոր գործակալություններ:<br><u>Անվտանգության ծառայություններ տրամադրողների համար</u><br>Օտարերկրացիներին թույլատրվում է տրամադրել անվտանգության ապահովման հարցերով խորհրդատվական ծառայություններ, սակայն |

| | |
|---|---|
| | նրանք պետք է ընկերություն գրանցեն տեղական մասնակցությամբ: Առնվազն մեկ տնօրենը պետք է լինի Սինգապուրի քաղաքացի կամ Սինգապուրում մշտական կացության կարգավիճակ ունեցող անձ: Բոլոր օտարերկրացիները պետք է ներկայացնեն իրենց ծագման երկրում դատվածություն չունենալու մասին տեղեկանք կամ Սինգապուրի երդման հարցերով հանձնակատարին տան հանդիսավոր երդում այն մասին, որ նրանք երբեք չեն դատապարտվել որևէ դատարանում որևէ հանցանքի համար: |
| **Միջոցի աղբյուր** | *«Մասնավոր անվտանգության ոլորտի մասին» ակտ*, 250Ա գլուխ, 2008 թվականի խմբագրություն |

15.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Կրթական ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Բարձրագույն կրթության ծառայություններ՝ կապված բժիշկների պատրաստման հետ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 92390 Բարձրագույն կրթության այլ ծառայություններ (միայն վերաբերում է բարձրագույն կրթության ծառայություններին՝ կապված բժիշկների պատրաստման հետ) |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br>Սինգապուրում բժիշկների պատրաստման համար նախատեսված բուհական կամ հետբուհական կրթական ծրագրերի իրականացման թույլտվություն տրամադրվում է միայն եռաստիճան համակարգ ունեցող այն տեղական հաստատություններին, որոնք ստեղծվել են խորհրդարանի ակտի համաձայն կամ Կրթության նախարարության կողմից սահմանված կարգով:<br>Ներկայումս միայն Սինգապուրի ազգային համալսարանին և Նանյանի տեխնոլոգիական համալսարանին է թույլատրված Սինգապուրում իրականացնելու բժիշկների պատրաստման համար նախատեսված բուհական կամ հետբուհական կրթական ծրագրեր: |
| **Միջոցի աղբյուր** | *«Բժիշկների գրանցման մասին» ակտ*, V մաս, Մասնագետների հավատարմագրման խորհուրդ, 2-րդ, 3-րդ, 34-րդ և 35-րդ բաժիններ<br>*«Մասնավոր կրթության մասին» ակտ*, 247Ա գլուխ, 2011 թվականի խմբագրություն |

16.

| Ոլորտ | Առողջապահական և սոցիալական ծառայություններ |
|---|---|
| Ենթաոլորտ | Բժշկական ծառայություններ<br>Դեղագործական ծառայություններ<br>Մանկաբարձություն և հարակից ծառայություններ, բուժքույրական ծառայություններ, ֆիզիոթերապևտիկ և պարաբժշկական ծառայություններ և կից առողջապահական ծառայություններ<br>Օպտոմետրիստներ և օպտիկներ |
| Տնտեսական գործունեության տեսակ | - |
| Համապատասխան պարտավորություններ | Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| Նկարագրություն | Ծառայությունների միջսահմանային առևտուր.<br>Հետևյալ ծառայությունների տրամադրումը թույլատրվում է միայն այն անձանց, որոնք համարվում են Սինգապուրի ռեզիդենտ՝ բժշկական ծառայություններ, դեղագործական ծառայություններ, մանկաբարձություն և հարակից ծառայություններ, բուժքույրական ծառայություններ, ֆիզիոթերապևտիկ և պարաբժշկական ծառայություններ, ինչպես նաև կից առողջապահական ծառայություններ, օպտոմետրիկ և օպտիկական ծառայություններ: |
| Միջոցի աղբյուր | *«Բժիշկների գրանցման մասին»* ակտ, 174-րդ գլուխ<br>*«Դեղագործների գրանցման մասին»* ակտ, 230-րդ գլուխ<br>*«Դեղերի մասին»* ակտ, 176-րդ գլուխ<br>*«Դեղերի (Դեղատների գրանցման) մասին» կանոնակարգեր*, 176-րդ գլուխ, 4-րդ կանոնակարգ<br>*«Բուժքույրերի և մանկաբարձուհիների մասին»* ակտ, 209-րդ գլուխ<br>*«Կից առողջապահական մասնագիտությունների մասին» 2011 թվականի ակտ*<br>*«Օպտոմետրիստների և օպտիկների մասին»* ակտ, 213Ա գլուխ |

**17.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Ներմուծում, արտահանում և առևտրային ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր.<br>Միայն տեղական մակարդակում ներկայությամբ ծառայություն մատուցողներին է թույլատրվում դիմել ներմուծման/արտահանման թույլտվություններ, ծագման սերտիֆիկատներ կամ այլ առևտրային փաստաթղթեր համապատասխան մարմիններից ստանալու համար: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ներմուծման և արտահանման կարգավորման մասին» ակտ*, 272Ա գլուխ<br>*«Ներմուծման և արտահանման կարգավորման մասին» կանոնակարգեր* |

**18.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Արտադրություն և արտադրության հետ կապված ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջները (3.8-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br>Սինգապուրում հետևյալ արտադրատեսակների արտադրության և այդ արտադրատեսակների արտադրության հետ կապված ծառայությունների նկատմամբ կարող են կիրառվել որոշ սահմանափակումներ՝<br>ա) գարեջուր և ստաուտ.<br>բ) սիգարներ.<br>գ) ծգած պողպատից արտադրանք.<br>դ) մաստակ, փչովի մաստակ, ատամների համար նախատեսված մաստակ կամ այլ նման նյութեր (որը բժշկական արտադրանք չէ *«Դեղերի մասին» ակտի* իմաստով (176-րդ գլուխ) կամ նյութ, որի առնչությամբ արձակվել է հրաման՝ Ակտի 54-րդ բաժնի համաձայն).<br>ե) ծխախոտ. և<br>զ) լուցկի: |
| **Միջոցի աղբյուր** | *«Արտադրության նկատմամբ հսկողության մասին» ակտ*, 57-րդ գլուխ, 2004 թվականի խմբագրություն |

**19.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բնական արգելոցների հետ կապված ծառայություններ (այդ թվում՝ ազգային պարկեր, բնական արգելոցներ և անտառ-պուրակներ) |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br>Ազգային պարկերի հարցերով խորհուրդը և (կամ) դրա իրավահաջորդ մարմինն այն միակ գործակալությունն է, որը լիազորված է հսկելու, ղեկավարելու և կառավարելու ազգային պարկերը, բնական արգելոցները և անտառ-պուրակները՝ *«Ազգային պուրակների հարցերով խորհրդի մասին» ակտով* սահմանված կարգով: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ազգային պուրակների հարցերով խորհրդի մասին» ակտ*, 198Ա գլուխ<br>*«Պուրակների և ծառերի մասին» ակտ*, 216-րդ գլուխ |

**20.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Էներգամատակարարում |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր.<br>էլեկտրաէներգիա արտադրողներին չի թույլատրվում իրականացնել էլեկտրաէներգիայի ուղղակի վաճառք սպառողներին և պետք է իրականացնեն վաճառք միայն էներգետիկ շուկայի վարչության կողմից լիցենզավորված՝ Սինգապուրի էլեկտրաէներգիայի ներքին շուկայի օպերատորի (օպերատորների) միջոցով:<br>Սինգապուրից դուրս տեղակայված էլեկտրաէներգիա արտադրողների կողմից Սինգապուրի էլեկտրաէներգիայի ներքին շուկա ընդհանուր առմամբ մատակարարված էլեկտրաէներգիայի քանակը չպետք է գերազանցի 600 ՄՎտ-ը:<br>Սինգապուրն իրավունք է վերապահում և ազատ է վերանայելու էլեկտրաէներգիայի մատակարարման 600 ՄՎտ շեմը և (կամ) նվազեցնելու այն: |
| **Միջոցի աղբյուր** | *«Էլեկտրաէներգիայի մասին» ակտ*, 89Ա գլուխ, 2002 թվականի խմբագրություն, 6(1) և 9(1) բաժիններ: |

**21.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Էներգամատակարարում |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Միայն տեղական մակարդակում ներկայությամբ այն անձինք, որոնք ունեն էլեկտրաէներգիայի մանրածախ վաճառքի լիցենզիա, կարող են Սինգապուրում մատակարարել էլեկտրաէներգիա: |
| **Միջոցի աղբյուր** | *«Էլեկտրաէներգիայի մասին» ակտ*, 89Ա գլուխ, 2002 թվականի խմբագրություն, 6(1) և 9(1) բաժիններ: |

**22.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Էլեկտրաէներգիայի փոխանցում և բաշխում |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br>Միայն փոխանցման լիցենզիա ունեցողն (ունեցողներն) է (են) համարվում Սինգապուրում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման ցանցի սեփականատեր և օպերատոր: |
| **Միջոցի աղբյուր** | *«Էլեկտրաէներգիայի մասին» ակտ*, 89Ա գլուխ, 2002 թվականի խմբագրություն, 6(1) և 9(1) բաժիններ: |

**23.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Սինթետիկ գազի և բնական գազի (խողովակային գազի) արտադրություն, մանրածախ վաճառք, փոխադրում և բաշխում |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Միայն «Սիթի Գազ» ՍՊԸ-ին [City Gas Ltd] և (կամ) դրա իրավահաջորդ մարմնին է թույլատրվում արտադրել սինթետիկ գազ և իրականացնել դրա մանրածախ վաճառքը:<br>Գազի փոխադրման լիցենզիա ունեցողներին է միայն թույլատրվում փոխադրել և բաշխել սինթետիկ ու բնական գազ:<br>Գազի փոխադրման միայն մեկ լիցենզիա է տրամադրվել՝ հաշվի առնելով Սինգապուրի շուկայի ծավալը: |
| **Միջոցի աղբյուր** | *«Գազի մասին» ակտ*, 116Ա գլուխ, 2002 թվականի խմբագրություն |

24.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Կեղտաջրերի հեռացման և աղբահանման, սանիտարական և շրջակա միջավայրի պաշտպանության այլ ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Օտարերկրյա ծառայություն մատուցողները պետք է լինեն Սինգապուրում՝ տեղական մակարդակում գրանցված:<br>Հանրային թափոններ հավաքող կազմակերպությունները (ՀԹՀԿ-ներ), որոնք ծառայություններ են մատուցում ներպետական և առևտրային կառույցներին, նշանակվում են հանրային մրցակցային մրցույթի միջոցով: ՀԹՀԿ-ների թիվը սահմանափակված է Սինգապուրի աշխարհագրական գոտիների թվով: Արտադրական և կոմերցիոն թափոնների համար շուկան բաց է ցանկացած լիցենզավորված սովորական թափոններ հավաքող կազմակերպությունների համար (ՍԹՀԿ-ներ): |
| **Միջոցի աղբյուր** | *«Շրջակա միջավայրով պայմանավորված հանրային առողջապահության մասին» ակտ*, 95-րդ գլուխ |

**25.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Զբոսաշրջության և ճամփորդության հետ կապված ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Պետական հիմնարկների սննդի կետերում սննդի և (կամ) խմիչքների մատակարարման ծառայություններ<br>Սննդամթերքի և (կամ) խմիչքների մատակարարման ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 643 Խմիչքների մատակարարման ծառայություններ՝ շինություններում սպառման համար<br>ՀԱԴ 642 Սննդի մատակարարման ծառայություններ<br>ՀԱԴ 6310 Սննդի մանրածախ վաճառք |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.</u><br>Միայն Սինգապուրի քաղաքացին կամ մշտական կացության կարգավիճակ ունեցող անձը կարող է դիմել կառավարության կողմից կառավարվող շուկաներում կամ սննդի բացօթյա կենտրոններում իրենց միջոցներով վաճառքի կետ շահագործելու լիցենզիա ստանալու համար:<br>Սինգապուրում սննդի և (կամ) խմիչքների մատակարարման ծառայություններ տրամադրելու համար օտարերկրյա ծառայություն մատուցողը պետք է Սինգապուրում գրանցվի որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից դիմի հանրային սննդի ձեռնարկության լիցենզիա ստանալու համար: |
| **Միջոցի աղբյուր** | *«Շրջակա միջավայրով պայմանավորված հանրային առողջապահության մասին» ակտ*, 95-րդ գլուխ, 2002 թվականի խմբագրություն |

**26.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Առևտրային ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Վտանգավոր նյութերի տարածում և վաճառք |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | <u>Ծառայությունների միջսահմանային առևտուր.</u><br>*«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման մասին» ակտով* և *«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման (վտանգավոր նյութերի) մասին» կանոնակարգերով* սահմանված կարգով վտանգավոր նյութերի տարածումը և վաճառքը թույլատրվում է միայն այն ծառայություն մատուցողներին, որոնք ապահովում են տեղական մակարդակում ներկայությունը և ունեն վտանգավոր նյութերի համար նախատեսված գործող լիցենզիա:<br>Սինգապուրն իրավունք է վերապահում և ազատ է փոփոխելու և (կամ) ընդլայնելու վտանգավոր նյութերի ցանկը, որոնք սահմանված կա թվարկված են *«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման մասին» ակտով* և *«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման (վտանգավոր նյութերի) մասին» կանոնակարգերով:* Սա ներառում է Ակտում և համապատասխան կանոնակարգերում փոփոխությունների կատարում՝ քիմիական նյութերի վերաբերյալ համապատասխան բազմակողմ բնապահպանական համաձայնագրերով (օրինակ՝ Ռոտերդամի կոնվենցիա, Ստոկհոլմի կոնվենցիա, Մինամատայի կոնվենցիա և Մոնրեալի արձանագրություն) ստանձնած իր պարտավորությունները կատարելու նպատակով: |
| **Միջոցի աղբյուր** | *«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման մասին» ակտ*, 94Ա գլուխ, 2002 |

| | |
|---|---|
| | թվականի խմբագրություն, 22-րդ բաժին *«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման (վտանգավոր նյութերի) մասին» կանոնակարգեր* |

27.

| Ոլորտ | Առևտրային ծառայություններ |
|---|---|
| Ենթաոլորտ | Բաշխման ծառայություններ<br>Մանրածախ առևտրի ծառայություններ<br>Մեծածախ առևտրի ծառայություններ |
| Տնտեսական գործունեության տեսակ | - |
| Համապատասխան պարտավորություններ | Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| Նկարագրություն | Ծառայությունների միջսահմանային առևտուր.<br>*«Դեղերի մասին»* ակտով և *«Բժշկական նշանակության արտադրանքի մասին»* ակտով սահմանված կարգով բժշկական և բժշկական նշանակության արտադրանքի ու նյութերի հետ կապված մեծածախ, մանրածախ վաճառքի և բաշխման ծառայությունների մատուցում թույլատրվում է միայն տեղական մակարդակում ներկայությամբ ծառայություն մատուցողներին:<br>Սինգապուրն իրավունք է վերապահում և ազատ է փոփոխելու և (կամ) ընդլայնելու բժշկական և բժշկական նշանակության արտադրանքի ու նյութերի ցանկը, որոնք սահմանված և(կամ) թվարկված են *«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման մասին»* ակտով և *«Շրջակա միջավայրի պաշտպանության և կառավարման (վտանգավոր նյութերի) մասին» կանոնակարգերով:* |
| Միջոցի աղբյուր | *«Դեղերի մասին»* ակտ, 176-րդ գլուխ<br>*«Բժշկական նշանակության արտադրանքի մասին»* ակտ, 122Դ գլուխ |

**28.**

| | |
|---|---|
| Ոլորտ | Տրանսպորտային ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Ծովային փոխադրման ծառայություններ<br>Բեռների սպասարկման ծառայություններ<br>Նավավարման ծառայություններ<br>Աղազրկված ջրի մատակարարում Սինգապուրի նավահանգիստներում կառանված կամ Սինգապուրի տարածքային ջրերում գտնվող նավերին |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 741 Բեռների սպասարկման ծառայություններ<br>ՀԱԴ 74520 Նավավարման և կառանման ծառայություններ (վերաբերում է միայն նավավարման ծառայություններին)<br>ՀԱԴ 74590 Ջրային տրանսպորտի համար նախատեսված այլ օժանդակ ծառայություններ |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Միայն «ՓԻԷՍԷՅ Կորպորեյշն» ՍՊԸ-ին [PSA Corporation Ltd] և «Ջուրոնգ Փորթ Փթե» ՍՊԸ-ին [Jurong Port Pte Ltd] կամ դրանց համապատասխան իրավահաջորդ մարմիններին է թույլատրվում տրամադրել բեռների սպասարկման ծառայություններ:<br>Միայն «ՓԻԷՍԷՅ Մարին Փթե» ՍՊԸ-ին [PSA Marine Pte Ltd] կամ դրա իրավահաջորդ մարմնին է թույլատրվում տրամադրել նավավարման ծառայություններ և աղազրկված ջուր մատակարարել Սինգապուրի նավահանգիստներում կառանված կամ Սինգապուրի տարածքային ջրերում գտնվող նավերին: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ծովային և նավահանգիստների հարցերով վարչության մասին» ակտ*, 170Ա գլուխ, 1997 թվականի խմբագրություն, 81-րդ բաժին: |

**29.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Տրանսպորտային ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Ծովային փոխադրման ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Միայն տեղական ծառայություն մատուցողներին է թույլատրվում գործարկել և կառավարել կրուիզային նավերի և լաստանավերի համար նախատեսված տերմինալներ:<br>Տեղական ծառայություն մատուցողները կամ Սինգապուրի քաղաքացիներ են կամ իրավաբանական անձինք, որոնց ավելի քան 50%-ը պատկանում է Սինգապուրի քաղաքացիներին: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ծովային և նավահանգիստների հարցերով վարչության մասին»* ակտ, 170Ա գլուխ, 1997 թվականի խմբագրություն, 81-րդ բաժին: |

**30.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Տրանսպորտային ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Ծովային փոխադրման ծառայություններ. Նավերի գրանցումը Սինգապուրի դրոշի ներքո |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 74590 Ջրային տրանսպորտի համար նախատեսված այլ օժանդակ ծառայություններ |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Միայն Սինգապուրի քաղաքացին կամ մշտական կացության կարգավիճակ ունեցող անձը կամ Սինգապուրի իրավաբանական անձը կարող է նավը գրանցել Սինգապուրի դրոշի ներքո:<br>Սինգապուրի բոլոր իրավաբանական անձինք, որոնք ցանկանում են նավերը գրանցել Սինգապուրի դրոշի ներքո, նշանակում են նավի օպերատոր, որը Սինգապուրի ռեզիդենտ է:<br>Սինգապուրի իրավաբանական անձանց պատկանող այն ջրային փոխադրամիջոցների կամ նավերի համախառն տոննաժը, որոնց մեծ մասը չի պատկանում Սինգապուրի քաղաքացիներին կամ Սինգապուրում մշտական կացության կարգավիճակ ունեցող անձանց, պետք է լինի առնվազն 1,600 և ինքնագնաց՝ մինչև դրանք Սինգապուրի դրոշի ներքո գրանցելը:<br>Այս վերապահման նպատակով Սինգապուրի իրավաբանական անձ է համարվում տեղական մակարդակում գրանցված ընկերությունը: |
| **Միջոցի աղբյուր** | *«Առևտրային նավագնացության մասին»* ակտ, 179-րդ գլուխ, 1996 թվականի խմբագրություն<br>*«Առևտրային նավագնացության (Նավերի գրանցում) (փոփոխություն) մասին» 2004 թվականի կանոնակարգեր* |

31.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Տրանսպորտային ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Ծովային փոխադրման ծառայություններ. Նավատների ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր.<br>*«Սինգապուրի ծովային փոխադրման և նավահանգստի վարչության մասին» ակտով* սահմանված կարգով որպես Սինգապուրի նավատի կարող են գրանցվել միայն Սինգապուրի քաղաքացիները և մշտական բնակության կարգավիճակ ունեցող անձինք: |
| **Միջոցի աղբյուր** | *«Ծովային և նավահանգիստների հարցերով վարչության մասին» ակտ*, 170Ա գլուխ, 1997 թվականի խմբագրություն, 40-րդ բաժին:<br>*«Սինգապուրի ծովային և նավահանգիստների հարցերով վարչության (Նավատների գրանցում և աշխատանքի տեղավորում) մասին» կանոնակարգեր* |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԴԻՐ

1.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (հոդված 2.5) |
| **Նկարագրություն** | Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող օգտվել սեփականության իրավունքից գյուղատնտեսական նշանակության հողի նկատմամբ: Նրանք կարող են լինել միայն հողի ժամանակավոր օգտագործողներ: |
| **Միջոցի աղբյուր** | Սահմանադրության փոփոխություններ (2015), 60-րդ հոդված<br>Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 2001), 4-րդ հոդված և 48-րդ հոդված |

**2.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Հայաստանում քարտեզագրությամբ, գեոդեզիայով, չափագրմամբ և հողաշինարարությամբ կարող են զբաղվել միայն Հայաստանի քաղաքացիները, որոնք ստացել են պետական լիազոր մարմնից որակավորման վկայական: |
| **Միջոցի աղբյուր** | Կառավարության 2011 թվականի N 1441-Ն որոշում, հավելված 2, կետ 3 |

**3.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն |
| **Ենթաոլորտ** | Իրավաբանական գործունեություն |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (HD-011-2013)<br>69.1- Իրավաբանական գործունեություն |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (հոդված 2.4) |
| **Նկարագրություն** | Նոտարի և նոտարի ստաժորի պաշտոնում կարող են նշանակվել միայն Հայաստանի քաղաքացիները: |
| **Միջոցի աղբյուր** | «Նոտարիատի մասին» օրենք, (ՀՕ-274, 2001), 10-րդ հոդված և 29-րդ հոդված |

4.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Վարչարարական և օժանդակ գործունեություն |
| **Ենթաոլորտ** | Անվտանգություն և հետաքննություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (HD-011-2013)<br>80.1-Անվտանգության ապահովման մասնավոր գործունեություն |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի և հատուկ միջոցների օգտագործմամբ, ինչպիսիք են՝ ռետինե մահակներ, ձեռնաշղթաներ, տրանսպորտային միջոցը հարկադիր կանգնեցնելու միջոցներ, պահնորդական շներ) իրավունք ունեն միայն Հայաստանի քաղաքացիները: |
| **Միջոցի աղբյուր** | «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենք, (ՀՕ-6-Ն, 2012), 12-րդ հոդված և 16-րդ հոդված |

5.

| | |
|---|---|
| Ոլորտ | Տեղեկատվություն և կապ |
| **Ենթաոլորտ** | Կինոյի արտադրություն, հեռուստատեսային ծրագրերի թողարկում, երաժշտական և այլ աուդիո ձայնագրություններ, հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (HD-011-2013)<br>60- Հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.5-րդ հոդված)<br>Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Մասնավոր մուլտիպլեքսորը պետք է լինի Հայաստանում հիմնադրված իրավաբանական անձ: Օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության և մասնավոր մուլտիպլեքսորի որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից: Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջազգային համաձայնագրերով: |
| **Միջոցի աղբյուր** | «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենք (ՀՕ-97-, 2000), 16-րդ հոդված և 55.1-րդ հոդված |

6.

| Ոլորտ | Մշակույթ, զվարճություններ և հանգիստ |
|---|---|
| Ենթաոլորտ | Շահումով խաղերի կազմակերպման գործունեություն |
| Տնտեսական գործունեության տեսակ | Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (HD-011-2013)<br>92.0-Շահումով խաղերի կազմակերպման գործունեություն |
| Համապատասխան պարտավորություններ | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| Նկարագրություն | Հայաստանում վիճակախաղերի կազմակերպման գործունեություն կարող են իրականացնել միայն Հայաստանի քաղաքացի և (կամ) Հայաստանում գրանցված իրավաբանական անձ հանդիսացող հիմնադիրներ ունեցող Հայաստանում գրանցված ձեռնարկությունները՝ համապատասխան լիցենզիայի հիման վրա:<br>Օտարերկրյա պետություններում կազմակերպված վիճակախաղերի տոմսերի իրացումը, բացառությամբ ինտերնետ տոտալիզատորի, Հայաստանում արգելվում է: |
| Միջոցի աղբյուր | «Վիճակախաղերի մասին» օրենք, (ՀՕ-3-Ն, 2003), 4-րդ հոդված |

7.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Մշակույթ, զվարճություններ և հանգիստ |
| **Ենթաոլորտ** | Շահումով խաղերի կազմակերպման գործունեություն |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (HD-011-2013)<br>92.0- Շահումով խաղերի կազմակերպման գործունեություն |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Հայաստանում շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների հետ կապված գործունեություն կարող են իրականացնել միայն Հայաստանում գրանցված ձեռնարկությունները: |
| **Միջոցի աղբյուր** | «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենք, (ՀՕ-1-Ն, 2003), 4-րդ հոդված |

8.

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Փոխադրումներ և պահեստային տնտեսություն |
| **Ենթաոլորտ** | Օդային տրանսպորտի գործունեություն |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (HD-011-2013)<br>51- Օդային տրանսպորտի գործունեություն |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (3.5-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Օդային տրանսպորտի թռիչքային անվտանգության նպատակով ավիացիայի ոլորտում լիազոր մարմինը տալիս է օդանավ շահագործողի վկայական՝ Հայաստանի կառավարության սահմանած կարգով, բացառապես.<br>ա) Հայաստանում գրանցված իրավաբանական անձանց, որոնց բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժնի և այլն) առնվազն 51 տոկոսը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի քաղաքացիներին և (կամ) Հայաստանում ստեղծված (պետական գրանցում ստացած) իրավաբանական անձանց, և<br>բ) Հայաստանի կառավարության լիազորված մարմիններին:<br>Հայաստանի շահերից ելնելով՝ ավիացիայի ոլորտում լիազոր մարմինը կարող է վերոնշյալ պայմաններից կիրառել բացառություններ, եթե կան հատուկ պատճառներ, և օդանավ շահագործողը բազավորվելու է Հայաստանում: |
| **Միջոցի աղբյուր** | «Ավիացիայի մասին» օրենք, (ՀՕ-81-Ն, 2007), 43-րդ հոդված |

# ՀԱՎԵԼՎԱԾ II

# ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բացատրական ծանոթագրություն

1. Սույն հավելվածում Կողմին առնչվող առդիրով, 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.7-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.10-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) համաձայն, սահմանվում են այն կոնկրետ ոլորտները, ենթաոլորտները կամ գործունեության տեսակները, որոնց համար այդ Կողմը կարող է իրականացնել գոյություն ունեցող միջոցները կամ ընդունել նոր կամ ավելի սահմանափակող միջոցներ, որոնք չեն համապատասխանում հետևյալով սահմանված մի քանի կամ բոլոր պարտավորություններին՝
   ա) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.3-րդ հոդված (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.6-րդ հոդված (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ).
   բ) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.4-րդ հոդված (Ազգային ռեժիմ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.5-րդ հոդված (Ազգային ռեժիմ).
   գ) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.5-րդ հոդված (Շուկայի մատչելիություն).
   դ) 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.6-րդ հոդված (Տեղական մակարդակում ներկայություն).
   ե) 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.8-րդ հոդված (Գործողություններին ներկայացվող պահանջներ). կամ
   զ) 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.9-րդ հոդված (Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ):
2. Առդիրում կատարված յուրաքանչյուր գրառում ներկայացվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝
   ա) **«Ոլորտ»** բաղադրիչը վերաբերում է այն ընդհանուր ոլորտին, որի վերաբերյալ կատարվել է գրառումը.
   բ) **«Ենթաոլորտ» բաղադրիչը**, հղման առկայության դեպքում, վերաբերում է այն կոնկրետ ենթաոլորտին, որի վերաբերյալ կատարվել է գրառումը.
   գ) **«Տնտեսական գործունեության տեսակների դասակարգում» բաղադրիչը**, հղման առկայության դեպքում, վերաբերում է չհամապատասխանող միջոցներում ընդգրկված գործողությանը՝
      i) Սինգապուրի դեպքում՝ ըստ Հիմնական ապրանքների ժամանակավոր դասակարգման մեջ օգտագործված ՀԱԴ ժամանակավոր ծածկագրերի (Վիճակագրական փաստաթղթեր,

շարք M, թիվ 77, Միջազգային տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ, Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրության բյուրո, Նյու Յորք, 1991 թվական), և

ii) Հայաստանի դեպքում՝ ըստ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013»-ում օգտագործվող ծածկագրերի, ինչը նշանակում է՝ Հայաստանի տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ, որը սահմանվել է Հայաստանի էկոնոմիկայի նախարարության կողմից՝ 2013 թվականի սեպտեմբերի 19-ին:

դ) **«Համապատասխան պարտավորություններ»** բաղադրիչում սահմանվում են 1-ին կետում նշված այն պարտավորությունը (պարտավորությունները), որոնք, 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.7-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.10-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցներ) համաձայն, չեն կիրառվում գրառման մեջ նշված ոլորտների, ենթաոլորտների կամ գործունեության նկատմամբ.

ե) **«Նկարագրություն»** բաղադրիչում ներկայացվում են այն ոլորտների, ենթաոլորտների կամ գործունեության շրջանակը կամ բնույթը, որին վերաբերում է վերապահումը. և

զ) **«Գոյություն ունեցող միջոցներ»** բաղադրիչում, նշված լինելու դեպքում, թափանցիկության նպատակներով ներկայացվում է գոյություն ունեցող այնպիսի միջոցների ոչ սպառիչ ցանկ, որոնք վերաբերում են գրառման մեջ արտացոլված ոլորտներին, ենթաոլորտներին կամ գործունեությանը:

3. 2-րդ գլխի (Ծառայությունների միջսահմանային առևտուր) 2.7-րդ հոդվածին (Չհամապատասխանող միջոցներ) և 3-րդ գլխի (Ներդրումներ) 3.10-րդ հոդվածին (Չհամապատասխանող միջոցներ) համապատասխան սույն Համաձայնագրի կատարված գրառման **«Համապատասխան պարտավորություններ»** բաղադրիչում նշված հոդվածները չեն կիրառվում այդ գրառման մեջ նշված ոլորտների, ենթաոլորտների և գործունեության նկատմամբ:

4. Կատարված գրառումը մեկնաբանելիս պետք է հաշվի առնվեն կատարված գրառման բոլոր բաղադրիչները:

# ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԴԻՐ

**1.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու ֆիզիկական անձանց ներկայությամբ կամ ֆիզիկական անձանց այլ ձևով տեղաշարժի, այդ թվում՝ ներգաղթի, երկիր մուտք գործելու կամ ժամանակավորապես գտնվելու միջոցով ծառայությունների մատուցման հետ կապված ցանկացած միջոց : |
| **Գոյություն ունեցող միջոցներ՝** | - |

**2.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (3.5-րդ հոդված)<br>Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (3.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու օդանավակայանների կառավարչի և օպերատորի լիազորություններից զրկելու հետ կապված ցանկացած միջոց : |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**3.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու սոցիալական ծառայությունների, հանրային իրավունքի իրավակիրառության, շտապ օգնության ծառայությունների, ուղղիչ ծառայությունների և հրշեջ ծառայությունների մատուցման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

4.

| | |
|---|---|
| Ոլորտ | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու սոցիալական ապահովության, պետական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող կամ պետության կողմից վերահսկվող առողջապահական հաստատությունների, ինչպես օրինակ՝ հիվանդանոցների և պոլիկլինիկաների կողմից առողջապահական ծառայությունների մատուցման, այդ թվում՝ այս հաստատություններում, հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում կատարված ներդրումների վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**5.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու անշարժ գույքի վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց ։ Սա ներառում է անշարժ գույքի սեփականության, վաճառքի, գնման, կառուցապատման և կառավարման վրա ազդեցություն ունեցող միջոցները, սակայն չի սահմանափակվում դրանցով:<br>Այս վերապահումը չի վերաբերում անշարժ գույքի հարցերով խորհրդատվական ծառայություններին, անշարժ գույքի գործակալության ծառայություններին, անշարժ գույքի աճուրդի հետ կապված ծառայություններին, անշարժ գույքի գնահատման ծառայություններին, ինչպես նաև վարձակալության կամ լիզինգի ծառայություններին, որոնք ներառում են սեփական կամ վարձակալված ոչ բնակելի գույք: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | *«Բնակելի անշարժ գույքի մասին»* ակտ, 274-րդ գլուխ, 2009 թվականի խմբագրություն<br>*«Պետական հողերի մասին»* ակտ, 314-րդ գլուխ, 1996 թվականի խմբագրություն<br>*«Սենտոսայի զարգացման կորպորացիայի [Sentosa* |

| | |
|---|---|
| | *Development Corporation] մասին»* ակտ, 291-րդ գլուխ, 1998 թվականի խմբագրություն (1998 թվականի մայիսի 30)<br>*«Բնակարանային ապահովման և կառուցապատման մասին»* ակտ, 129-րդ գլուխ, 2004 թվականի խմբագրություն<br>*«Բնակարան կառուցողների (Հսկողություն և լիցենզավորում) մասին»* ակտ, 130-րդ գլուխ, 1985 թվականի խմբագրություն<br><br><br>*«Ջուրոնգ Թաուն Կորպորեյշնի [Jurong Town Corporation] մասին»* ակտ, 150-րդ գլուխ, 1998 թվականի խմբագրություն<br>*«Կառավարչական կոնդոմինիումի բնակարանային ապահովման ծրագրի մասին»* ակտ, 99Ա գլուխ, 1997 թվականի խմբագրություն<br>*«Պլանավորման մասին»* ակտ, 232-րդ գլուխ<br>*«Կոմերցիոն նպատակներով գույքի վաճառքի մասին»* ակտ, 281-րդ գլուխ, 1985 թվականի խմբագրություն: |

**6.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու հետևյալի վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց՝<br>ա) կառավարության իրավասությունների շրջանակներում մատուցվող ծառայությունների՝ մասնավոր հատվածին լրիվ կամ մասնակի փոխանցում.<br>բ) ամբողջությամբ Սինգապուրի կառավարության սեփականությունը հանդիսացող ձեռնարկությունում դրա բաժնային մասնակցության և (կամ) ակտիվների օտարում. և<br>գ) մասնակիորեն Սինգապուրի կառավարության սեփականությունը հանդիսացող ձեռնարկությունում դրա բաժնային մասնակցության և (կամ) ակտիվների օտարում: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**7.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բոլոր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու Սինգապուրի կառավարության կողմից «Սինգափուր Թեքնոլոջիս Էնջինիերինգում» [Singapore Technologies Engineering] (Ընկերություն) և (կամ) իրավահաջորդ մարմնում բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը պահելու՝ ներառյալ, ի թիվս այլնի, տնօրենների խորհրդի անդամների նշանակման և լիազորությունների ժամկետի դադարեցման, ընկերության բաժնետոմսերի օտարման և Ընկերության լուծարման հետ կապված ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**8.**

| | |
|---|---|
| Ոլորտ | Ազգային էլեկտրոնային համակարգերի կառավարումը և գործարկումը |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակն** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու ազգային էլեկտրոնային համակարգերի միջոցով սեփականություն համարվող տեղեկությունների հավաքման և կառավարման հետ կապված կամ դրանց վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**9.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Զենք և պայթուցիկ նյութեր |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու զենքի և պայթուցիկ նյութերի ոլորտի վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | *«Զենքի և պայթուցիկ նյութերի մասին» ակտ*, 13-րդ գլուխ, 2003 թվականի խմբագրություն |

**10.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Հեռարձակման ծառայություններ<br>Հեռարձակումը սահմանվում է որպես պայմանանշանների կամ ազդանշանների փոխանցում ցանկացած տեխնոլոգիայի միջոցով՝ ամբողջ հասարակության կամ դրա մի մասի կողմից լսողական և (կամ) տեսողական ծրագրի ազդանշանների ընկալման և (կամ) ցուցադրման համար: |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակն** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու Սինգապուրի ներքին լսարանին տրամադրվող կամ Սինգապուրի ծագման հեռարձակման ծառայությունների և հեռարձակման ծառայությունների համար հաճախականությունների տիրույթի հատկացման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց:<br>Այս վերապահումը չի վերաբերում միայն վերջնական սպառողին լիցենզավորված հեռարձակման ծառայությունների տրամադրման հետ կապված գործունեությանը:<br>Ձայնագրությունների պատրաստման, տարածման և հանրությանը ցուցադրման հանձնառությունները չեն ներառում հեռարձակման բոլոր ծառայություններն ու նյութերը և հեռարձակման |

| | |
|---|---|
| | հետ կապված տեսալսողական ծառայություններն ու նյութերը: Վերապահման ենթակա ծառայությունների օրինակները ներառում են բաց ցանցով հեռարձակումը, կաբելային ցանցով և վճարովի հեռարձակումը, արբանյակային ուղիղ հեռարձակումը և տելետեքստը: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**11.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Ժամանցային և մշակութային ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | - |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու ստեղծագործական արվեստի, մշակութային ժառանգության և այլ մշակութային ոլորտների, այդ թվում՝ ժամանցային ծառայությունների և այլ մշակութային ծառայությունների հետ կապված ցանկացած միջոց. «Ստեղծագործական արվեստը» ներառում է հետևյալը՝ կատարողական արվեստը, այդ թվում՝ թատրոնը, պարը և երաժշտությունը, ինչպես նաև կերպարվեստը, կիրառական արվեստը, գրականությունը, կինոարվեստը, հեռուստատեսային, վիդեո, ռադիո արվեստը, կայքերի ստեղծագործական բովանդակությունը, տեղի ավանդական մշակութային փորձը, ժամանակակից մշակութային ինքնարտահայտման ձևերը, ինչպես նաև թվային ինտերակտիվ միջավայրը և գեղարվեստական ստեղծագործության հիբրիդային այնպիսի ժանրերը, որոնցում արվեստի վերացական ուղղություններով չսահմանափակվելու համար օգտագործվում են նոր տեխնոլոգիաներ: «Մշակութային ժառանգությունը» ներառում է |

| | |
|---|---|
| | հետևյալը՝ ազգաբանական, հնագիտական, պատմական, գրական, գեղարվեստական, գիտական կամ տեխնոլոգիական շարժական կամ անշարժ ժառանգությունը, այդ թվում՝ թանգարանների, պատկերասրահների, գրադարանների, արխիվների և մշակութային ժառանգության հավաքագրման այլ հաստատությունների կողմից պահվող և ցուցադրվող փաստաթղթավորված հավաքածուները. |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**12.**

| | |
|---|---|
| Ոլորտ | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Զինված պահակախմբի ծառայություններ և գրահապատ մեքենաների ծառայություններ<br>Զինված թիկնապահական ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակն** | ՀԱԴ 87305 Թիկնապահական ծառայություններ |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու զինված պահակախմբի, գրահապատ մեքենայի և զինված թիկնապահական ծառայության տրամադրման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | *«Ոստիկանական ուժերի մասին»* ակտ, IX մաս, 235-րդ գլուխ, 2006 թվականի խմբագրություն |

**13.**

| | |
|---|---|
| Ոլորտ | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Խաղադրույքների և շահումով խաղերի ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու խաղադրույքների և շահումով խաղերի ծառայությունների մատուցման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | *«Խաղադրույքների մասին»* ակտ, 211-րդ գլուխ, 2011 թվականի խմբագրություն<br>*«Հանրամատչելի խաղասրահների մասին»* ակտ, 49-րդ գլուխ, 1985 թվականի խմբագրություն<br>*«Մասնավոր վիճակախաղերի մասին»* ակտ, 250-րդ գլուխ<br>*«Վիրտուալ խաղադրույքների մասին»* ակտ, 2014 թվականի 34-րդ ակտ<br>*«Խաղատների (կազինոների) հսկողության մասին»* ակտ, 33Ա գլուխ |

**14.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Վարկային պատմության մասին տեղեկությունների տրամադրման ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու վարկային պատմության մասին տեղեկությունների տրամադրման ծառայությունների մատուցման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**15.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Արտոնագրային հավատարմատարի ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու որպես արտոնագրային հավատարմատար ընդունելության, գրանցման ու որակավորման նպատակներով կրթության և մասնագիտական որակավորումների ճանաչման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | *«Արտոնագրերի մասին» ակտ*, 221-րդ գլուխ, 2005 թվականի խմբագրություն |

**16.**

| | |
|---|---|
| Ոլորտ | Բիզնես ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Գիտատեխնիկական խորհրդատվության ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | ՀԱԴ 8675 ճարտարագիտության մասով գիտատեխնիկական խորհրդատվության ծառայություններ |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու հետևյալ ծառայությունների մատուցման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց.<br>ա)Երկրաբանական, երկրաֆիզիկական և գիտական հետազոտության այլ ծառայություններ (ՀԱԴ 86751).<br>բ) Ընդերքի ուսումնասիրության ծառայություններ (ՀԱԴ 86752).<br>գ) Մակերևույթի ուսումնասիրության ծառայություններ (ՀԱԴ 86753), և<br>դ) Քարտեզագրման ծառայություններ (ՀԱԴ 86754): |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**17.**

| | |
|---|---|
| Ոլորտ | Բիզնես ծառայություններ. Մասնագիտական ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Իրավաբանական ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
| **Համապատասխան պարտավորություններ** | Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (2.3-րդ հոդված և 3.6-րդ հոդված)<br>Ազգային ռեժիմ (2.4-րդ հոդված և 3.5-րդ հոդված)<br>Շուկայի հասանելիություն (2.5-րդ հոդված)<br>Տեղական մակարդակում ներկայություն (2.6-րդ հոդված)<br>Գործողություններին ներկայացվող պահանջներ (3.8-րդ հոդված)<br>Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդ (3.9-րդ հոդված) |
| **Նկարագրություն** | Ծառայությունների միջսահմանային առևտուր և ներդրումներ.<br>Սինգապուրը իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու Սինգապուրում իրավաբանական ծառայությունների մատուցման վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջոց: |
| **Գոյություն ունեցող միջոցներ** | - |

**18.**

| | |
|---|---|
| **Ոլորտ** | Համայնքային, անհատական և սոցիալական ծառայություններ |
| **Ենթաոլորտ** | Կոոպերատիվ ընկերությունների կողմից մատուցվող ծառայություններ<br>Արհմիությունների կողմից մատուցվող ծառայություններ |
| **Տնտեսական գործունեության տեսակ** | - |
